ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ, 2017 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի կազմը հաստատվեց 2016թ. նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության բազմաշահառու խումբ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի թիվ 1104-Ա որոշմամբ[1]:

2016 թվականի դեկտեմբերի 26-ին տեղի ունեցած ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի նիստի ժամանակ խումբը հաստատեց Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգը[2], Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի 2017-2018 թվականների աշխատանքային ծրագիրը[3] և Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը: Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը[4] ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը ներկայացվեց 2016 թվականի դեկտեմբերի 28-ին:

Հայաստանը՝ ԱՃԹՆ-ի թեկնածու երկիր

• • •

2017 թվականի մարտի 9-ին Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում կայացած Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության խորհրդի նիստին խորհուրդը հաստատեց Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը և Հայաստանի Հանրապետությանը շնորհվեց **ԱՃԹՆ-ի թեկնածու երկրի կարգավիճակ**:

Համաձայն Հայաստանի Հանրապետության 2017-2018թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ, որոնք հաստատվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:

[1] https://www.e-gov.am/decrees/item/16411/
[2] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_TOR_Armenia.pdf
[3] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/EITI_Workplan_Armenia_arm(1).pdf
[4] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/EITI_Application_Armenia.pdf

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-Ի 2017-2018ԹԹ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում

Միջոցառում 4. ԱՃԹՆ կայքի համալրում համապատասխան տեղեկատվությամբ (հաշվետվությունների, տեսագրությունների, արձանագրությունների հրապարակում կայքում)

Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջը հաշվետու ժամանակահատվածում մշտապես թարմացվել է, ներկայացվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն հայերեն և անգլերեն լեզուներով:

Միջոցառում 5. Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում

Մշակվել և տպագրվել է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի վերաբերյալ 2 տեղեկատվական թերթիկ (հավելված 1) հայերեն և անգլերեն լեզուներով: Տեղեկատվական թերթիկները տարածվել են Հայաստանի Հանրապետության Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության թեկնածու երկիր դառնալուն նվիրված միջոցառման ժամանակ, ինչպես նաև նախատեսվում է դրանք տարածել պլանավորված մարզային այցելությունների ժամանակ: Պատրաստվել են նաև տեղեկատվական-կիրառական այլ պարագաներ, այդ թվում՝ բաներներ, գրենական պիտույքներ և այլն:

Հայաստանի Հանրային հեռուստաընկերությամբ եթեր հեռարձակվող «Հրապարակում» հաղորդման շրջանակներում մեկնարկեց «Թափանցիկ հանքարդյունաբերություն» հաղորդաշարը, որի նպատակն է հանրությանը իրազեկել Հայաստանում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության ներդրման աշխատանքների մասին, ներկայացնել Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի անդամներին, նրանց, ինչպես նաև ոլորտում ներգրավված այլ

մասնագետների կարծիքը նախաձեռնության և դրանից ակնկալվող օգուտների վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում եթեր է հեռարձակվել 4 հաղորդում:

Հաղորդում 1[5]. Հարցազրույց ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ Դավիթ Հարությունյանի հետ,

Հաղորդում 2[6]. Հարցազրույց ԲՇԽ-ի արդյունահանող կազմակերպությունները ներկայացնող անդամներ Արմեն Ստեփանյանի և Պերճ Խաչատրյանի հետ,

Հաղորդում 3[7]. Հարցազրույց ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամ Հարություն Մովսիսյանի և ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կետրոնի տնօրեն Ալեն Ամիրխանյանի հետ,

Հաղորդում 4[8]. Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածու երկիր դառնալուն նվիրված միջոցառման լուսաբանում:

Փետրվարի 28-ին կայացած ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատանքային հանդիպման ժամանակ ԲՇԽ-ն հաստատեց ԱՃԹՆ-ի լոգոյի Հայաստանի ազգային տարբերակը և Հայաստանի Հանրապետության Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության պաշտոնական լոգոյի օգտագործման ուղղեցույցը (հավելված 2): ԱՃԹՆ-ի լոգոյի Հայաստանի ազգային տարբերակը կամավորության հիմքով մշակել է Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի սան Էմիլ Տեր-Ավետիքյանցը:

Միջոցառում 6. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում

Facebook[9], YouTube[10], Twitter[11] և GOXI[12] ցանցերում ստեղծվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, որոնցում հրապարակվում է հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի

[5] https://www.youtube.com/watch?v=kLnhBKdXfDk&t=409s
[6] https://www.youtube.com/watch?v=T4I2uLuGmss&t=228s
[7] https://www.youtube.com/watch?v=L6kcSIaEPuc&t=4s
[8] https://www.youtube.com/watch?v=fGhLBEvVVis&t=19s
[9] https://www.facebook.com/EITIArmenia/
[10] https://www.youtube.com/results?search_query=eiti+armenia
[11] https://twitter.com/EITI_Armenia
[12] http://goxi.org/profile/EITIArmenia

ներդրման վերաբերյալ տեղեկատվություն ավելի լայն հանրությանը նախաձեռնության լուսաբանման նպատակով:

Միջոցառում 7. Հաղորդակցության ռազմավարության մշակում

ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուների, ԲՇԽ-ի աշխատանքային խմբի և հասարակական հիմունքներով ներգրավված փորձագետի կողմից սկսվել են ՀՀ ԱՃԹՆ-ի հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքները:

Միջոցառում 9. Իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում

Մարտի 24-ին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի աջակցությամբ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության թեկնածու երկիր դառնալուն նվիրված միջոցառումը[13]: Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ վարչապետը, փոխվարչապետը, նախարարներ, Միացյալ Նահանգների և Միացյալ Թագավորության դեսպանները, ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրենը, Համաշխարհային բանկի և այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի անդամները, քաղաքացիական հասարակության և արդյունահանող կազմակերպությունների ներկայացուցիչներ, տեսաուղերձներ հղեցին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության պետ Յոնաս Մոբերգը և ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի այլընտրանքային անդամ Օլեկսեյ Օռլովսկին: Միջոցառումը լայնորեն լուսաբանվեց Հայաստանի Հանրապետությունում գործող հեռուստաընկերությունների և էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից:

Մարտի 28-ին Մեդիա կենտրոնում ԲՇԽ-ի անդամներ Խաչիկ Հակոբյանը, Արմեն Ստեփանյանը և Արթուր Գրիգորյանը մասնակցեցին «Հանքարդյունաբերության հաշվետու և թափանցիկ կառավարման մարտահրավերներն ու խնդիրները» թեմայով ուղիղ հեռարձակմամբ քննարկմանը[14]:

Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության կարգավիճակի ապահովում

Միջոցառում 38. Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն

[13] http://www.gov.am/am/news/item/12895/
[14] https://www.facebook.com/mediacenterarmenia/videos/998073050324239/

ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուները հանդիպումներ են ունեցել գործընկեր միջազգային կազմակերպությունների, մասնավորապես, Հայաստանում Բրիտանական դեսպանատան և Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ, որոնց հետ քննարկվել են ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքներին միջազգային կազմակերպությունների մասնակցության հնարավոր ուղղությունները:

Միջոցառում 43. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ ԱՃԹՆ անդամ երկրների հետ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուները համագործակցել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուների հետ Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության հայտի ուսումնասիրության, Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման և ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի միջոցառումների իրականացման հետ կապված մեկնաբանությունների և խորհրդատվության ստացման նպատակով: Կազմակերպվել են կոնֆերանս զանգեր, իրականացվել է նամակագրություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ղեկավարության և ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահի միջև:

Միջոցառում 44. Մասնակցություն ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և կոնֆերանսներին

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամներ Խաչիկ Հակոբյանը, Արմեն Ստեփանյանն ու Հարություն Մովսիսյանը մասնակցեցին 2017 թվականի մարտի 8-9-ին Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում կայացած Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության խորհրդի նիստին, որի ժամանակ ԱՃԹՆ-ի միջազգային խորհուրդը քննարկեց Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը և Հայաստանի Հանրապետությանը շնորհվեց ԱՃԹՆ-ի թեկնածու երկրի կարգավիճակ: ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի նիստին ԲՇԽ-ի կառավարության և քաղաքացիական հասարակության խմբակցությունները ներկայացնող անդամների մասնակցությունը ապահովվեց Համաշխարհային բանկի աջակցությամբ:

Բաց կառավարման գործընկերության շրջանակներում 2017թ. փետրվարի 16-17-ը Կիևում տեղի ունեցավ «Բաց կառավարում. Եվրասիական հարթություն» խորագրով հանդիպում տարածաշրջանի երկրների կառավարությունները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ներկայացնող պատվիրակությունների

մասնակցությամբ: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը հանդիպմանը, որպես բաց կառավարման լավագույն հանձնառություն, ներկայացրեց Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացը:

Միջոցառում 47. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի ձևավորում

Փետրվարի 28-ին և մարտի 20-ին տեղի ունեցան ՀՀ ԱՃԹՆ բազմաշահառու խմբի անդամների աշխատանքային հանդիպումներ, որոնց ժամանակ քննարկվեցին ԱՃԹՆ-ի ներդրման, ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով սահմանված ընթացիկ աշխատանքները, կազմավորվեց աշխատանքային խումբ ԱՃԹՆ-ի հեռահաղորդակցության ռազմավարության մշակման համար:

Մարտի 20-ին կայացած հանդիպման ժամանակ քննարկվեց ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ Էրիկ Գրիգորյանի՝ ՀՀ վարչապետի օգնական նշանակվելու հիմքով լիազորությունների դադարեցման հարցը: Մարտի 21-ին, համաձայն ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի 25-րդ կետի, ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության այլընտանքային անդամ Արթուր Համբարձումյանին նշանակեց ԲՇԽ-ի ժամանակավոր անդամ:

Հավելված 1

ARMENIA
EITI
Extractive Industries Transparency Initiative
Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն - Հայաստան
USAID
FROM THE AMERICAN PEOPLE
Այս տեղեկատվական թերթիկը հրատարակվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով:


Ի՞ՆՉ է ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ (ԱՃԹՆ/EITI)
Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է, որին անդամակցում է 51 երկիր:
Երկրի բնական պաշարների արդյունահանումը կարող է ապահովել տնտեսական աճ և սոցիալական զարգացում: Սակայն այդ գործընթացի վատ կառավարումը կարող է հանգեցնել կոռուպցիոն ռիսկերի և ձևավորել անվստահության մթնոլորտ: Արդյունահանող ոլորտի կառավարման բաց և հանրային վերահսկողությունն անհրաժեշտ է, որպեսզի բնական պաշարների օգտագործումը շահավետ լինի բոլորի համար:
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ
• 2015թ. հուլիսին Հայաստանի Հանրապետության վարչապետը հայտարարեց Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ ստանդարտի ներդրման հանձնառության մասին: Գործընթացի համակարգման պատասխանատու նշանակվեց ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը:
• 2016թ. նոյեմբերին ձևավորվեց 15 անդամից բաղկացած ԱՃԹՆ բազմաշահառու խումբը (ԲՇԽ)՝ հետևյալ կազմով.
➢ 6 ՀՀ կառավարության ներկայացուցիչ,
➢ 4 արդյունահանող կազմակերպությունների ներկայացուցիչ,
➢ 5 քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, որից մեկը ներկայացնում է գիտակրթական հաստատությունները
• 2016թ. դեկտեմբերին ԱՃԹՆ միջազգային քարտուղարությանը ներկայացվեց Հայաստանի Հանրապետության թեկնածության հայտը:
2017թ. մարտի 9-ին Կոլումբիայում կայացած ԱՃԹՆ խորհրդի նիստի ժամանակ Հայաստանի Հանրապետությանը շնորհվեց թեկնածու երկրի կարգավիճակ:
Ի՞ՆՉ է ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԱՃԹՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ
ԱՃԹՆ զեկույցը պետք է ներառի ամբողջական տեղեկատվություն պետության կողմից տրված թույլտվությունների, արդյունահանման ծավալների, հարկերի, ռոյալթիների և այլ վճարների հավաքագրման, եկամուտների տեղաբաշխման, սոցիալական ծախսերի վերաբերյալ:
Հայաստանի Հանրապետությունը առաջին ԱՃԹՆ զեկույցը պետք է ներկայացնի թեկնածության կարգավիճակ ստանալուց հետո 18 ամսվա ընթացքում: Զեկույցը կազմվում է անկախ կազմակերպության կողմից՝ համաձայն ԱՃԹՆ ստանդարտի պահանջների և բազմաշահառու խմբի կողմից սահմանված առաջադրանքի: Սկզբնական շրջանում Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ն ընդգրկելու է մետադրական հանքարդյունաբերությունը:
ԱՃԹՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՀՍԿՈՂ ՄԱՐՄԻՆԸ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՈՒՄԲՆ է:
Կառավարություն
ԲՇԽ 3 կողմերը իրավահավասար են, և որոշումները կայացվում են ընդհանուր համաձայնությամբ՝ կոնսենսուսով:
ԱՃԹՆ գործընթաց
ԻՆՉՊԵ՞Ս ՄԱՍՆԱԿՑԵԼ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ
Բազմաշահառու խմբի յուրաքանչյուր խմբակցություն ներկայացնում է, համապատասխանաբար, պետական մարմինների, գործարար հատվածի և քաղաքացիական հասարակության բոլոր հետաքրքրված ներկայացուցիչներին:
Կապ հաստատե՛ք նրանց հետ, փոխանցե՛ք ձեր կարծիքն ու առաջարկությունները նրանց միջոցով:
www.gov.am/en/eiti/
eiti@gov.am
EITI Armenia
EITI Armenia
@EITI_Armenia
GOXI @EITI_Armenia

ARMENIA
EITI
Extractive Industries Transparency Initiative
Extractive Industries Transparency Initiative - Armenia
USAID
FROM THE AMERICAN PEOPLE
This brochure is made possible by the support of the American People through the United States Agency for International Development


WHAT IS EITI?
The Extractive Industries Transparency Initiative (EITI) is a global standard to promote the open and accountable management of extractive resources. The EITI Standard is implemented by 51 countries.
Wealth from natural resources can lead to economic growth and social development. However, not disclosing information about this wealth can increase the risk of corruption and distrust. Transparent governance of the extractive industry and public oversight are necessary to ensure that the resources benefit all.
THE EITI IMPLEMENTATION PROCESS IN ARMENIA
• In July 2015, the Prime Minister of Armenia announced Armenia's commitment to implement the EITI Standard and appointed the Minister-Chief of Staff of the Armenian Government to lead Armenia's EITI implementation process.
• In November 2016, the EITI multi-stakeholder group (MSG) was formed, consisting of 15 members:
➢ 6 representatives of the government;
➢ 4 representatives of mining companies;
➢ 5 representatives of the civil society, including 1 representative of the education and science sector.
• In December 2016, Armenia submitted its application to the EITI International Secretariat to become an EITI implementing country.
In March 2017, during its meeting in Bogota, Colombia, the EITI Board approved Armenia's EITI candidature application.
WHAT DOES THE EITI REPORT DISCLOSE?
The EITI Report includes comprehensive information on permits issued by the state, extraction volumes, collected taxes, royalties and other payments, revenue allocations, and social contributions.
EITI Report
Armenia will publish its first EITI Report within 18 months from the date of being granted EITI candidate status. The country report must be produced by an Independent Administrator according to the EITI requirements and the Terms of Reference approved by the MSG.
THE MULTI-STAKEHOLDER GROUP OVERSEES THE EITI IMPLEMENTATION PROCESS
COMPANIES
CIVIL SOCIETY
GOVERNMENTS
The three constituents of the MSG have equal rights and make decisions by consensus.
The EITI Process
Companies Disclose Payments to Government
Government Discloses Receipts from Companies
Award of licenses & contracts
Regulation & monitoring of operations
Reconciliation of Audited Payments/ Receipts (EITI Report)
Revenue Distribution & management
Expenditure management Pursuit of Sustainable Development Policies
Oversight by Multi-Stakeholder Group
HOW CAN YOU ENGAGE IN THE EITI PROCESS?
The MSG represents all stakeholders from government agencies, the extractive industry, and civil society. Contact them to share your comments and suggestions:
www.gov.am/en/eiti/
eiti@gov.am
EITI Armenia
EITI Armenia
@EITI_Armenia
GOXI @EITI_Armenia



«Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի հիմնական նպատակները

Ծրագիրը նպաստում է Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության ավելացմանը՝ աջակցելով կառավարության հետևյալ նպատակներին.

- Միանալ **Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (ԱԵԹՆ)**
- Թվայնացնել **Հանրապետական երկրաբանական ֆոնդի նյութերը**
- Իրականացնել հանրային իրազեկում

Գործողություններ

- ԱԵԹՆ ներդրման գործընթացում կառավարությանը և ԱԵԹՆ բազմաշահառու խմբին (ԲՇԽ) աջակցելու նպատակով խորհրդատուների ներգրավում
- ԲՇԽ անդամների համար կարողությունների զարգացման դասընթացների կազմակերպում
- Երկրաբանական Ֆոնդի նյութերի թվայնացման համար անհրաժեշտ սարքավորումների գնում
- Թվայնացման աշխատանքների համար մասնագիտացված կազմակերպության ներգրավում

Արդյունքներ

- 2017թ. մարտի 9-ին Բոգոտայում կայացած ԱԵԹՆ խորհրդի նիստի ընթացքում Հայաստանին շնորհվեց թեկնածու երկրի կարգավիճակ
- Ծրագրի շրջանակներում երկրաբանական ֆոնդում առկա նյութերից արդեն թվայնացվել է շուրջ 1.200.000 էջ (ներառյալ՝ 10.000 մ² քարտեզ)
- Մշակվել է երկրաբանական ֆոնդի ինտերակտիվ կայք (www.geo-fund.am), որը համալվում է թվայնացվող նյութերով


USAID
FROM THE AMERICAN PEOPLE
ENHANCED TRANSPARENCY IN THE MINING SECTOR
Joint Project of the Government of Armenia and the United States Agency for International Development


Enhanced Transparency in the Mining Sector
The Project promotes transparency and accountability in Armenia's mining sector through assisting the efforts of the Government of Armenia in:
Joining the Extractive Industries Transparency Initiative (EITI)
Digitizing the data of the Republican Geological Fund
Raising public awareness
ACTIVITIES
Provision of technical expertise to advise the Government and the EITI Multi-Stakeholder Group (MSG) on the implementation of the EITI
Organization of trainings for the MSG members
Procurement of equipment and services for the digitization of the Geological Fund's data
RESULTS
Armenia received an EITI candidate country status on March 9, 2017
Digitization of the Geological Fund's data is underway, with 1,200,000 pages, including around 10,000 m² maps, already digitized
An interactive website of the Geological Fund (www.geo-fund.am) is developed and continuously updated with digitized materials

Հավելված 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԼՈԳՈՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂԵՑՈՒՅՑ

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության անվանումն ու լոգոն համարվում են ԱՃԹՆ/EITI-ի սեփականությունը: EITI-ի թեկնածու և անդամ երկրները կարող են մշակել և օգտագործել EITI-ի լոգոն կամ լոգոյի ազգային տարբերակը՝ համաձայն EITI-ի կողմից սահմանված կանոնների[1]: EITI-ի անվանման և լոգոյի, այդ թվում՝ լոգոյի երկրի ազգային տարբերակների օգտագործման իրավունքները վերացվում են, եթե երկրի EITI-ի կարգավիճակը ուժը կորցրած է ճանաչվում EITI-ի խորհրդի կողմից:

EITI-Ի ԼՈԳՈՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

EITI-ի լոգոյի Հայաստանի ազգային տարբերակը կամավորության հիմքով մշակել է Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի սան Էմիլ Տեր-Ավետիքյանցը: Համաձայն EITI-ի կողմից սահմանված կանոնների՝ մշակվեց Հայաստանի EITI-ի ազգային լոգոյի 5 տարբերակ (հավելված 1), որոնք ներկայացվեցին Հայաստանի EITI-ի բազմաշահառու խմբի կարծիքին: Բազմաշահառու խմբի համաձայնությամբ՝ ընտրվեց Հայաստանի EITI-ի ազգային լոգոն՝ երկու տարատեսակներով:

[1] https://eiti.org/logo-policy

ՀԱՅԱՍՏԱՆԻ EITI-Ի ԱԶԳԱՅԻՆ ԼՈԳՈՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի EITI-ի պատասխանատուներին (Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությանը) և Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի անդամներին իրավունք է վերապահվում օգտագործել Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության անվանումն ու լոգոն՝ հետևյալ տարբերակներով.

Բազմաշահառու խմբի անդամները կարող են օգտագործել EITI-ի անվանումն ու լոգոն ԲՇԽ անունից հանդես գալու, խմբի կողմից պատվիրակված գործողություններ իրականացնելու կամ նախապես խմբի կողմից համաձայնեցված այլ դեպքերում:

EITI-ի լոգոն երկգույն է: Միագույն լոգոյի օգտագործումը թույլատրվում է, երբ տպագրության հնարավորությունները սահմանափակ են: Լոգոն դիրքավորելիս՝ լոգոյի չորս կողմերում այլ էլեմենտներից պետք է պահպանել նվազագունը լոգոյի առաջին «E» տառի չափով տարածություն:

EITI-ի միջազգային քարտուղարությունը EITI-ին աջակցող կազմակերպություններին և երկրներին շնորհում է EITI-ի անվանման ու լոգոյի օգտագործման սահմանափակ իրավունք: EITI-ի աջակիցների ցանկերը տրված են ստորև բերված հղումներով.

- կառավարություններ www.eiti.org/supporters/countries
- կազմակերպություններ www.eiti.org/supporters/companies
- ինստիտուցիոնալ ներդրողներ www.eiti.org/supporters/investors
- քաղաքացիական հասարակության կազմակերպություններ www.eiti.org/supporters/civilsociety

- գործընկեր կազմակերպություններ www.eiti.org/supporters/organisations

Սույն դեպքերում EITI-ի անվանումն ու լոգոն չպետք է օգտագործվեն այնպիսի եղանակներով, որոնք ենթադրում են, որ կազմակերպությունների արտադրանքն ու ծառայությունները հավանության են արժանացել EITI-ի կողմից կամ EITI-ը հանդիսանում է այդ միջոցառման, արտադրանքի կամ ծառայության հեղինակը/աղբյուրը:

Բոլոր հրապարակումներն ու նյութերը, որտեղ օգտագործվում են EITI-ի անվանումն ու լոգոն, հրապարակումից հետո 1 շաբաթվա ընթացքում պետք է ներկայացվեն EITI-ի միջազգային քարտուղարություն Ruseløkkveien 26, 0251 Oslo, Norway հասցեով կամ secretariat@eiti.org էլեկտրոնային փոստին:

ԱՅԼ ԱՆՁԱՆՑ և ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ EITI-Ի ԱՆՎԱՆՄԱՆ ՈՒ ԼՈԳՈՅԻ «ԱՐԴԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ»

Եթե EITI-ի անվանման ու լոգոյի օգտագործումը համարվում է «արդար օգտագործում[2]», անհրաժեշտ է դիմել անվանման ու լոգոյի օգտագործման իրավուքի համար հետևյալ դեպքերում.

- ✓ ակադեմիական հետազոտություններ
- ✓ կրթական նպատակներ
- ✓ լրատվական նպատակներ:

Սույն դեպքերում ևս EITI-ի անվանումն ու լոգոն չպետք է օգտագործվեն այնպիսի եղանակներով, որոնք ենթադրում են, որ կազմակերպությունների արտադրանքն ու ծառայությունները հավանության են արժանացել EITI-ի կողմից կամ EITI-ը հանդիսանում է այդ միջոցառման, արտադրանքի կամ ծառայության հեղինակը/աղբյուրը: Բոլոր հնարավոր դեպքերում լոգոյի կողքին պետք է նշվի. «Բովանդակության համար պատասխանատվությունը միմիայն հեղինակներինն է, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Հայաստանի Հանրապետության Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության տեսակետները»:

Բոլոր այլ դեպքերում EITI-ի անվանման ու լոգոյի օգտագործման համար պետք է ունենալ EITI-ի միջազգային քարտուղարության թույլտվությունը, որի համար պետք է դիմել նախապես՝ ուղարկելով փաստաթղթի օրինակը, հնարավորության դեպքում նշելով լոգոյի տեղադրությունը:

[2] https://en.wikipedia.org/wiki/Fair_use

EITI-ի անվանման ու լոգոյի օգտագործումը չի թույլատրվում հետևյալ դեպքերում.

- երբ EITI-ի լոգոն համարվում է մաս կամ լրացնում է կազմակերության սեփական լոգոյին և այլ տարբերանշաններին,
- երբ EITI-ի լոգոն օգտագործվում է առևտրային նպատակներով՝ ներառյալ բիզնեսի խթանման նպատակով արտադրանքի, ծառայությունների կամ միջոցառումների գովազդը,
- EITI-ի լոգոյի օգտագործումը գրասենյակային պիտույքների, այցեքարտերի և այլ տպագիր նյութերի վրա,
- EITI-ի լոգոյի ցանկացած օգտագործում, որը ենթադրում է արտադրանքի, ծառայությունների կամ միջոցառումների հավաստագրում կամ կնքում:

EITI ԼՈԳՈՅԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

EITI-ը ներդրող երկրների և աջակիցների կողմից EITI-ի անվանման և լոգոյի օգտագործման հետևողականությունը պահպանելու համար կարևոր է ունենալ EITI-ի բրենդի պահպանման ռազմավարություն: Համապատասխանաբար, երբ աջակիցները, շահագրգիռ կողմերը և EITI-ը ներդրող երկրները իրենց փաստաթղթերում և նյութերում ներառում են EITI-ի անվանումն ու լոգոն, նրանք պետք է խստորեն առաջնորդվեն EITI լոգոյի օգտագործման ուղեցույցով:

Եթե EITI-ի լոգոն օգտագործվում է կայքում, այն պետք է ուղեկցվի EITI-ի www.eiti.org պաշտոնական կայքին հղմամբ: